կան տապանատան արևելյան կողմի տաճարի ավերակները Սանահնի վանքի հիմնարկությունից առաջ գոյություն ունեցող հնագույն եկեղեցու մնացորդները չեն, ինչպես ենթադրել է Ղրիմեցին, այլ պատկանում են 11—13-րդ դարերում կառուցված մի անհայտ եկեղեցու, որի կառուցման մասին ոչ արձանագրություն ունենք և ոչ էլ մատենագրական տեղեկություններ։

Սակայն, հնագույն մնացորդների հետքեր պահպանվել են Ամենափրկիչ եկեղեցու արևելյան սեղանի հարավակողմյան աստիճանների կողքին, եկեղեցու մույթերի մեջ, որտեղ երևում են գոյություն ունեցող եկե-

Նկ. 1. Սանահնի վանքի ընդհանուր տեսարանը հր աե կողմից։

ղեցու հետ որևէ առնչություն չունեցող հնագույն մի տաճարի, հավանաբար, դարձյալ որմնամույթի խարսխի քարը՝ պայտաձև զարդերի շարքով, որոնց կենտրոնում ուռուցիկ գնդակներ են դրված։ Այդ միանգամայն ուշագրավ քարն իր բուն դիրքում է թե ոչ, այժմ դժվար է պարզել առանց ստուգումների, բայց ակներև է, որ այստեղ գոյություն է ունեցել մի շատ հին, հավանաբար 4—5-րդ դարերում կառուցված տաճար, որի ավերակների վրա հետագայում կառուցել են այժմ գոյություն ունեցող Ամենափրկիչ եկեղեցին (նկ. № 2)։

Քաջբերունին, հենվելով ավանդության վրա, հայտարարում է, որ 4-րդ դարի սկզբին մի փոքրիկ խորան է շինվել Սանահրնում[1]։

Այդ մասին ոչ միայն հնագույն մատենագիրները, այլև ավելի ուշ ժամանակների՝ 10—17-րդ դդ. հեղինակները ոչինչ չեն հիշատակում, թեև ընդարձակորեն տեղեկություններ են տալիս Սանահնի մասին։

Այստեղ անհրաժեշտ է նշել, որ Սանահնի ճարտարապետական մանրակնին քննությունը դեռ չի կատարվել և ոչ էլ պեղմամբ ուսումնասիրվել են տաճարներն ու նրանց ավերակների տեղ-տեղ երևացող հիմնապատերը, որպեսզի վերջնական խոսք ասվեր հնագույն շենքերի հիմնարկության ժամանակի մասին, բայց վերևում մեջ բերած հնագույն մնացորդները ցույց են տալիս, որ այնտեղ եղել է մի հնագույն տաճար, որի տեղում հետագայում հիմնարկվել է Սանահրնի հռչակավոր վանքը[2]։

[1] Քաջբերունի, Ճանապարհորդական հիշատակարան, «Արձագանք», 1884, էջ 629։

[2] Սանահնի ճարտարապետական քննությունը կատարել է ճարտ. Հովհաննես Ղալփախչյանը, բայց նրա ուսումնասիրությունը դեռևս չի հրատարակված և մեզ ծանոթ չէ։